№ 47 Մարտի 21 (Ապրիլի 2) 1880 Մարտի 21 (Ապրիլի 2) № 47

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք գիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մենք թէ էջմիածինը։—Ներքին տեսութիւն։ Թիֆլիսի Նահանգական դատարանի վճիռը։ Նամակ Երևանից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Դոկտոր Մորդմանի նամակը։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Խենթը։

ՄԵՆՔ ԹԷ ԷՋՄԻԱԾԻՆԸ

Երբ Վասպուրականից լսեցինք ճիչը սովամահ հայերի, մենք շտապեցինք նրան հաղորդել մեր ընթերցողներին և մեր ձայնը կայծակի արագութեամբ հասաւ ամեն տեղ։ Մի քանի օրեր չանցած խմբագրութիւնը սկսեցին հեղեղել նուիրատուութիւնները, հայրենասիրութեան այդ առատ տուրքերը։ Իւրաքանչիւր հայի կուրծքը սկսեց, կարծես, աւելի ազատ շնչել, քան թէ երբէք, երբ միմեանցից հազար վերստ հեռու գտնվող մեր ազգայինները ապացուցեցին, թէ՝ ամեն շրջանի, ամեն պայմանների մէջ նոցա սիրտը դեռ զգայուն է Հայաստանի շահերին։

Յիրաւի, այս ուրախալի երեւոյթը կարելի է առաջինը համարել հէնց այն օրից, քանի որ մենք յիշում ենք ժամանակակից հայերին, քանի որ ամենքի բերանից միայն նախատինք և արհամարհանք ենք լսում հայի դէմ։ Այսպիսի եղբայրասիրութեան զօրեղ ցոյցերից յետոյ, իւրաքանչիւր հայը բարոյապէս էլ իրան վարձատրված կարող է համարել, համոզվելով իրօք որ իր ազգայինների մէջ դեռ չէ կորել մարդասիրութիւն, եղբայրասիրութիւն և հայրենասիրութիւն, որով պարծենում են ամեն լաւ ազգերը, վասն որոյ ջերմ սրտով մենք ողջունում ենք բոլոր հայերին։

Բայց երբ Եփրատի ծոցից հնչեց հառաչանք սովամահ հայերի, ո՞վ էր պարտական առաջինը լսել։ Երբ Այգեստանում սփռվում էին սովից հարիւր դիակներ, ով էր պարտական առաջինը տեսնել։ Երբ մի ամիս առաջ դեռ նոր էր լսվում թէ սովը տիրում է Հայաստանը, ո՞վ էր պարտական օգնութեան հրաւիրել։ Երբ ռուս, վրացի, գերմանացի, պարսիկ և հրէայ համակրելով հայաստանցիների վիճակին, սկսեցին նուիրատուութիւններին մասնակցել, ո՞վ էր պարտական առաջին լուման գցել, ո՞վ էր պարտական առաջնորդ դառնալ և եղբայրասիրութեան օրինակ լինել.... մե՞նք, թէ Էջմիածինը. մարդիկ, դուք ասեցէք....

Բայց ամբողջ ժամանակ Էջմիածինը լռեց, որովհետև նա իր հաշիւներն ունէր, նա միայն իր համար էր մտածում։

Եւ ահա երբ մեր հրաւէրները բոլորին շարժեցին, բոլորի սիրտը յուզեցին, երբ ամեն տեղ ոգևորվելով, հայը օգնութեան շտապեց,—այդ ժամանակ միայն Էջմիածինը սկսեց ամեն տեղ պատուէրներ և ժապաւենած դրքեր ուղարկել, որ քահանաները տունից տուն շրջելով սովելոց համար նուիրատուութիւններ հաւաքեն։ Եթէ իսկապէս սովելոց համար է Էջմիածնի այդ նոր կարգադրութիւնը, ինչի ուրեմն նա չէ ցանկանում որ հանդանակութիւնը կարելի է առաջինը համարել հէնց այն օրից, քանի որ մենք յիշում ենք ժամանակակից հայերին, քանի որ ամենքի բերանից միայն նախատինք և արհամարհանք ենք լսում հայի դէմ։ Այսպիսի եղբայրասիրութեան զօրեղ ցոյցերից յետոյ, իւրաքանչիւր հայը բարոյապէս էլ իրան վարձատրված կարող է համարել, համոզվելով իրօք որ իր ազգայինների մէջ դեռ չէ կորել մարդասիրութիւն, եղբայրասիրութիւն և հայրենասիրութիւն, որով պարծենում են ամեն լաւ ազգերը, վասն որոյ ջերմ սրտով մենք ողջունում ենք բոլոր հայերին։

Բայց երբ Եփրատի ծոցից հնչեց հառաչանք սովամահ հայերի, ո՞վ էր պարտական առաջինը լսել։ Երբ Այգեստանում սփռվում էին սովից հարիւր դիակներ, ով էր պարտական առաջինը տեսնել։ Երբ մի ամիս առաջ դեռ նոր էր լսվում թէ սովը տիրում է Հայաստանը, ո՞վ էր պարտական օգնութեան հրաւիրել։ Երբ ռուս, վրացի, գերմանացի, պարսիկ և հրէայ համակրելով հայաստանցիների վիճակին, սկսեցին նուիրատուութիւններին մասնակցել, ո՞վ էր պարտական առաջին լուման գցել, ո՞վ էր պարտական առաջնորդ դառնալ և եղբայրասիրութեան օրինակ լինել.... մե՞նք, թէ Էջմիածինը. մարդիկ, դուք ասեցէք....

Բայց ամբողջ ժամանակ Էջմիածինը լռեց, որովհետև նա իր հաշիւներն ունէր, նա միայն իր համար էր մտածում։

Եւ ահա երբ մեր հրաւէրները բոլորին շարժեցին, բոլորի սիրտը յուզեցին, երբ ամեն տեղ ոգևորվելով, հայը օգնութեան շտապեց,—այդ ժամանակ միայն Էջմիածինը սկսեց ամեն տեղ պատուէրներ և ժապաւենած դրքեր ուղարկել, որ քահանաները տունից տուն շրջելով սովելոց համար նուիրատուութիւններ հաւաքեն։ Եթէ իսկապէս սովելոց համար է Էջմիածնի այդ նոր կարգադրութիւնը, ինչի ուրեմն նա չէ ցանկանում որ հանդանակութիւնը բաց, ամենքին յայտնի, տպագրական ճանապարհով, խմբագրութեան ձեռքով անցնի սովեալների փորը....Ի՞նչի է նա ձգտում անպատճառ իրան մօտ տանել այդ փողը, երբ Էջմիածնում մինչև այժմ մնացել են Ալաշկերտի գաղթականների համար հաւաքած անյայտ 17 հազար բուբլիները և շատ այդպիսի փողեր...

Ի՞նչի յայտնի, աշկարայ ճանապարհը թողած՝ Էջմիածինը այդ ճանապարհով է ուզում գործ բռնել....

Գր. Նիկողոսեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌԸ

Երկուշաբթի, մարտի 17-ին, երեկոյեան 4½ ժամին Թիֆլիսի նահանգական դատարանը կեղծ թղթադրամներ շինելու, նրանց տարածելու և փորագրող Նիլ Լեոնտիեվին ըսպանելու գործի մասին հետևեալ վճիռը

ԽԵՆԹԸ

ԱՐԿԱԾՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԱՑԱՍՏԱՆՈՒՄ

—

ԺԸ.

Օդայի մէջ լուսային ճրագը դեռ վառվում էր, տարածելով իր շուրջը աղօտ լոյս։ Վարդանը երկար մնաց անքուն։ Այն գիշերվայ խօսակցութիւնները զրգռել էին նրա ուղեղը։ Նա յիշում էր ծերունու որդիների սառնասրտութիւնը դէպի իր և նորեկ հիւրի «քարոզները»։ Նա զարմանում էր, որ այնպէս կասկածանքով էին նայում այդ ոգելից և ազնիւ երիտասարդի վրա։ Միւս կողմից, նրա սիրտը խռովում էր երկու սէր, որոնք չատ չէին տարբերվում միմեանցից իրանց ընաւորութիւնով. —մէկը, հարստահարված գիւղացու սէրը, միւսը, Լալայի սէրը, որ նոյնպէս բարոյական հարստահարութեան ենթակայ էր...։

Նա աչք ձգեց, տեսաւ, որ Նորեկ երիտասարդը քնած էր։ Ճրագի աղօտ լուսով նկարվում էր նրա գունաթափ և մաշված դէմքը, որի սուր գծերի մէջ արտայայտվում էր մի հաստատուն ընաւորութիւն։ Նրա քունը անհանգիստ էր։ Ցենդային զառանցութեան մէջ տանջվում էր նա։ Երբեմն նրա ցամաք շրթունքը շարժվում էին, և լսելի էին լինում խառն, կցկտուր խօսքեր, ֆրանսիերէն և հայերէն լեզուով.

«Գիւղացիներ... հասաւ ժամը... ձեր արիւնով պիտի գնէք... ձեր ազատութիւնը... Ներկան... ապագան... մեզ է պատկանում... ցոյց տուեցէք... քաջեր... որ թուրքի... երկաթի գաւազանը... բոլորովին չէ մահացրել... ձեր մէջ կեանքը... և... ազատութեան... զգացմունքը...։ Կրակի... և... սրի մէջ... պիտի գտնենք... մեր... փրկութիւնը...։ Դէպ առաջ... քաջեր....

—խեղճ, ասաց Վարդանը գլուխը շարժելով։—Երևի շատ գրքեր է կարդացել...։ Հայ գիւղացու ողորմելի օդայի մէջ իրան Փարիզի բարրիկադների վրա է երևակայում և ճառ է խօսում... խեղճ...

Այդ միջոցին Վարդանի ականջին զարկեց երգի մեղմիկ ձայն, որ տխուր հնչիւններով լսելի էր լինում գիշերային լռութեան մէջ։ Նա ճանաչեց նազելի ձայնը և դուրս եկաւ օդայից։

Ծերունի խաչօի տանը մի երկրորդ արարած ևս այն գիշեր արթուն էր. նա իր անկողնի մէջ անհանգիստ կերպով այս կողմ և այն կողմ էր շուռ գալիս։ Նրա շուրջը, սրահի մէջ, այր և կին բոլորը ծանր քնով խռնփում էին։ Մշակի յոգնած և վաստակաբեկ անդամները գիշերվայ արթնութիւն չը գիտեն։

Միայն Լալան հանգիստ լինել կարող չէր։ Նա հաղնվեցաւ և կամաց դուրս եկաւ սրահից։ Կատուն այնպէս զգոյշ, այնպէս հեզիկ կերպով չէր կարող փոխել իր քայլերը, որպէս այդ մանկահասակ աղջիկը, անցնելով սրահի միջից, յայտնվեցաւ բակում։ Շունը նրան հեռուից տեսնելով, սկսեց հաչել։ «Սուս», չչնջաց նա հաղիւ լսելի ձայնով։ Շունը լռեց։ Խաղաղ դարնանային գիշեր էր։ Օդի զովութիւնը մրսեցնելու չափ ցուրտ էր. բայց նա աւելի կազդուրեց օրիորդին, աւելի հովացրեց նրա բորբոքված դէմքը։ Նա անցաւ դէպի պարտէզը և մտաւ ծառերի մէջ։ Այստեղ խաւարը աւելի թանձր էր. այստեղ նրան չէին տեսնի։ Նա նստեց թաւշեայ խոտերի վրա, և ձեռքը ծնօտին դրած, սկսեց նայել դէպի երկինքը։ Լուսինը չէր երևում. «Որտեղ է նա, մտածում էր օրիորդը, երևի, քնած է»։ Նրա շուրջը տիրում էր խորին լռութիւն։ Ծառերի վրա մի տերև անդամ չէր շարժվում։ Բոլորը հանգստանում էին, թէ քամին, որ շատ անդամ օրօրում էր այդ ծառերի ճիւղերը, և թէ գետը, որի աղմկալի հոսանքի ձայնը նա միշտ լսել էր գիշերային լռութեան ժամանակ։ Բոլորը հանգստանում էին, միայն ինքը անհանգիստ էր, միայն ինքը արթուն էր։

Նա յիշեց մի երգ, որ սովորել էր պառաւ տատից. և բոլորովին ակամայ կերպով դուրս թռան նրա սեղմված շրթունքի միջից սիրելի երգի անուշ հնչիւնները.

«Քնած է լուսնեակը երկնքի խորքում,
«Քնած է թռչնակը իր փափուկ բընում,
«Քնած է քամին, տերևը չէ շարժվում,
«Քնած է գետը, ձայնը չէ լսվում։

«Մայրիկ, ինչու ես քնել չեմ կարում,
«Ուզում եմ քնել, աչքս չէ փակվում.
«Մայրիկ, այս ինչ է, որ ինձ տանջում է,
«Այս ինչ կրակ է, որ սիրտս այրում է»։

Վերջացնելով երգը, նա գլուխը ցած թողեց ծնկերի վրա, և երկու ձեռքով բռնելով իր բորբոքված երեսը սկսեց դառն կերպով լաց լինել։ Արտասուքը հեղեղի նման թափվում էր նրա սիրուն աչքերից։ Ի՞նչու էր լաց լինում։—Ինքն էլ չը գիտէր։ Արդեօք նրա համար, որ միտը բերեց իր սիրելի մօրը, որին չէր տեսել, որի բերնից մի անուշ խօսք անդամ չէր լսել։ Էլ ինչու էր լաց լինում։ Այդ ինչ անբացատրելի զգացմունք էր, որ խռովում էր նրա կուսական անմեղ սիրտը։

Բայց արտասուքը փոքր ինչ հանգստացրեց նրան։ Նա գլուխը վեր բարձրացրեց, նայեց իր շուրջը, և նրա աչքը ընկաւ չորս կաղամախիների հովանու տակ հանգստացած գերեզմանի վրա, որ չատ հեռու չէր իր նստած տեղից։ Դա իր քրոջ Սօնայի գերեզմանն էր, որին թէև չէր տեսել, բայց նրա ցաւալի պատմութիւնը հազար անդամ լսել էր։ Հանդուցեալը նահատակի նշանակութիւն էր ստացել ռամիկ ամբոխի մէջ, և նրա գերեզմանի մօտ չատ անդամ բերում էին հիւանդներ։ Ծերունի հօր պատուիրելով, նրա վրա ամեն կիւրակէ-մուտ գիշեր վառվում էր մի իւղային ճրագ։ Այս գիշեր ճրագը տակաւին ծխրտում էր, պլպլում էր և լուսաւորում էր գերեզմանի դաճով պատած սպիտակ մակերեսյթը։ Լալան սարսափով նայում էր նրա վրա։ Քրոջ ցաւալի պատմութիւնը նրա բորբոքված երևակայութեան մէջ իրականութիւն ստացաւ։ Նա այժմ տեսնում էր գերեզմանի փոխարէն մի քրդի սև չադր, լեռների մի խուլ ձորի մէջ կազմված։ Նրա մէջ նստած էր Սօնան զարհուրելի-յուսահատ դէմքով։ Նա իր ձեռքում բռնած ունէր թոյնի բաժակը, մօտեցնում էր շրթունքին և յետ էր տանում։ Երկար նա մաքառում էր կեանքի և մահուան դէմ։ Ահա, մօտենում էր չադրին քուրդ աղնուականը՝ Սօնայի յափշտակողը։ Սօնան տեսաւ նրան. կրկին մօտեցրեց իր շրթունքին թունաւոր բաժակը, խաչակնքեց և խըմաւ...։

Տեսարանը փոխվեցաւ։

Լալայի աչքի առջև դրած էր դարձեալ Սօնայի սպիտակ գերեզմանը։

Այժմ նրա երևակայութեան մէջ պատկերացան երկու ուրիշ անձինք. մէկը, Թոմաս էֆէնդին իր խորամանկ և գարշելի դէմքով, միւսը, քուրդ Ֆաթթահ-բէկը իր վայրենի և գաղանային դէմքով։ Նա բոլոր մարմնով դողաց։ Արդեօք դիտէր, արդեօք յայտնի էր նրան, թէ ինչ փոս են փորում այդ երկու մարդիկը իր համար։—Նա ոչինչ չը գիտէր. նա միայն զգում էր...

—Չէ, բացականչեց նա սոսկալի ձայնով,—ես Սօնայի մօտ չեմ գնայ... ես վախենում եմ գերեզմանից...։

Այդ միջոցին մի ձեռք հեզիկ կերպով դրվեցաւ նրա ուսի վրա, և լսելի եղաւ նրա անունը.

—Լալայ...

Օրիորդը ոչինչ չը լսեց։

—Լալայ... կրկնվեցաւ ձայնը,—ես չեմ թողնի, որ դու Սօնայի մօտ գնաս... ես կաղատեմ քեզ...

Նա յետ նայեց, տեսաւ, իր մօտ կանգնած էր Վարդանը։

—Հա, աղատիր ինձ... խօսեց նա, դեռ առանց սթափվելու իր առաջին խռովութիւնից.—աղատիր, տար մի ուրիշ երկիր, այստեղ վատ է... այստեղ չատ վատ է...

յայտնեց։ Ցանցաւորներ պօրուչիկ Նիկիտ Զանիբէգովին, Ար. Խէչատուրովին, Զաքարբէգովին, Արծաթպանեանցին, Զուգաեվին, Ամիրխանովին, Աղաջան Բաղալովին և Վ. Արութինովին զրկել բոլոր իրաւունքներից և ենթարկել տաժանակիր աշխատանքներին 10 տարի ժամանակով և յետոյ բնակեցնել Սիբիրում։ Կօն. Վարդանովին ենթարկել տաժանակիր աշխատանքների 10 տարի։ Ի. Մուրադովին բնակեցնել Սիբիրում։ Գէորգ. Դիդարովին ենթարկել զորձարանական աշխատանքներին 6 տարի ժամանակով։ Գէորգ. Միրիանովին և Զախ. Նասկիդովին կալանաւորել ուղղող բօտաների մէջ 1 տարի ժամանակով։ Իս. Բաղալեանցին ուղղող բօտաների մէջ կալանաւորել 3 տարի ժամանակով։ Գէորգ. Գամբարովին ենթարկել տաժանակիր աշխատանքների 8 տարի ժամանակով, իսկ յետոյ բնակեցնել Սիբիրում։ Աբէլ Հաջիմահմուդովին ենթարկել տաժանակիր աշխատանքների 4 տարի ժամանակով, իսկ յետոյ բնակեցնել Սիբիրում։ Իշխան Լուկա Անդրօնիկովին զրկել իրաւունքներից և 2 ամիս կալանաւորել բանտի մէջ։ Մեղադրված՝ Բակալովին, Ե. Կալանտարովին, Գիւլջանովին, Բախչիսարայցեվին, Տէր-Սարքիսովին, Լազարեվին, Եկատերինա Պոպովին, Ար. Հաջիմահմուդովին, Ցիսկարաշվիլի, Եա. Դուրգալովին, Կանոնիչին, Պ. Կարայեվին, Կվինիկաձէին և Իվ. Բէժանովին արդարացնել և միջնորդել Դիդարովի և Աբ. Հաջիմահմուդովի պատժի թեթևացնելու մասին։

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

25 փետրվարի

Փոթորկալից էին ամսոյս 8-ի, 14-ի և 18-ի քաղաքային խորհրդի նիստերը։

Ես չեմ կարող այդ նիստերի մանրամասնութիւնները հաղորդել ձեր ընթերցողներին, այդ մասին պէտք էր որ լինէի կամ սղագիր և կամ արագագիր։ այդ յատկութիւններից զուրկ լինելով, հաղորդում եմ նիստերի մէջ վիճաբանութեան դրած խնդիրների էական և վերջնական հանգամանքները։

Ցիշեալ նիստերում քննութեան առարկայ եղան քաղաքի մաքրութեան և բնակիչներին հաց տալու խնդիրները։ Քաղաքի ճանապարհները, փողոցները՝ սալարկները, կամուրջները, հրապարակները և ջրանցքները մաքուր և չէն պահելու համար քաղաքային խորհուրդը (Դումա) իր նախորդ նիստերում որոշել է հարկաւոր եղած ծախսը վերցնել քաղաքային արկղից։ Այս պատճառով, պ. քաղաքագլուխը առաջարկում էր, ամսոյս 8-ին, խորհրդին որ սա նշանակէ մի դումար, որով հնար լինի մաքրել տալ քաղաքի այն տեղերը, որտեղերից վարակիչ հիւանդութիւններ յառաջ գալու երկիւղ կայ։ Բայց որովհետև այդպիսի տեղերի ոչ տարածութեան չափը, ոչ մաքրելու հարկաւոր եղած գումարի նախահաշիւը չէր յայտնի, ուստի խորհուրդը վճռեց յետաձգել այդ առաջարկութիւնը երկու շաբաթ ժամանակով, որպէս զի գործադիր վարչութիւնը (управа) պատրաստէ նախահաշիւը և զեկուցանէ խորհրդին, համաձայն առաջարկութեան իրաւասու պ. պ. Վ. Ար. և Վ. Սաս. Եղիազարեանների։

Հիմայ որ հարցն սկսվել է, միւս կողմից էլ առատ անձրևներ են գալիս, գլխաւոր փողոցներիցն անգամ անցուդարձը չափազանց դժուարացած լինելով, յուսով ենք որ ք. վարչութիւնը չի ուշացնի իր զեկուցումը, ի նկատի առնելով քաղաքիս թաղերի աննկարագրելի աղբանոցները ևս, որ տաքութեան սկսվելու հետ, կարող են զարհուրելի կերպիւ թունաւորել օդը և հիւանդութիւններ առաջ բերել։

Երկրորդ խնդիրը կայանում էր նորանում, որ պ. քաղաքագլուխը առաջարկում էր փոխել նախորդ նիստերում կայացած հետևեալ վճիռները։

1) Այն, որի զօրութիւնով ք. վարչութիւնը պէտք էր առանձին յանձնաժողովի ձեռքով ցորեն կամ ալիւր բերել տար և խալվարը 70 ռուբլով բաժանէր հացթուխներին, որպէս զի սոքա պարտաւոր լինէին թխած հացի փարը (12 ֆունտը) ծախելու քաղաքացիներին 60 կոպէկով և նոյն գնով տալ գիւղացիներին ևս, իւրաքանչիւր գիւղացու 6 ֆունտ միայն։

Եթէ չեմ սխալվում, այս վճիռը կայացել էր պ. քաղաքագլխի առաջարկութեան համաձայն, բայց այն ժամանակ, երբ կարելի էր տակաւին ցորենի և ալիւրի խալվարը գնել 70—75 ռուբլով։ Փոքր միջոցից յետոյ ցորենի և ալիւրի խալվարը բարձրանալով մինչ 80—100 ռուբլի, քաղաքը կարող էր, այդ վճռին համաձայն, օրական 150—200 ռուբլ վնասի ենթարկվել։ ուստի, հակառակ օրէնքի, բայց յօգուտ քաղաքի, վերոյիշեալ վճիռը փոխվեց այսպէս.

ա.) Ինչ գնով որ քաղաքային վարչութեան կողմից նշանակած յանձնաժողովը կարողանայ ձեռք բերել ցորենը կամ ալիւրը, նոյն գնով տալ հացթուխներին և թխած հացի գինը աւելացնել։

բ.) Որովհետև քաղ. վարչութիւնը չէ կարող այնքան ցորեն և ալիւր ձեռք բերել, որ կարողանայ լրացնել և գիւղացիների պիտոյքը, ուստի զոցա տրուելիք հացի քանակութեան վերաբերեալ վճիռը թողնել անփոփոխ։

2) Վերոյիշեալ փոփոխութիւնների հետ փոխվեցան մի քանի վճռված խնդիրներ ևս. ա) անգործադրելի մնաց այն վճիռը, որով քաղաքային խորհուրդը պարտաւորվում էր առանձին յանձնաժողովի հսկողութեան ներքոյ բանալ 4 հացարան աղքատ հայերի համար և, կարծեմ, 6 հացարան աղքատ թուրքերի համար, որտեղից աղքատութեան տոմսակ ստացած մարդիկ պէտք է էժան գնով թխած հաց գնէին իրանց համար յատկացած խանութներից։ բ.) Անգործադրելի մնաց այն որոշումն, որ եթէ թուրք-հացթուխները չը համաձայնվէին վարչութեան նշանակած գնով թըխած հաց տալ քաղաքիս աղքատներին, պէտք էր հայերն իրանց աղքատների համար առանձին հացարան բանային, իսկ թուրքերն արդէն օգնում էին իրանց աղքատներին նորանով որ՝ մինչև իրանց հաւատակիցներին չը բաւականացնէին թըխած հացով, ուշադրութիւն չէին դարձնում հայ աղքատների աղաչական ձայնին։

Այսպիսով քաղաքիս աղքատները ընդհանրապէս և ի մասնաւորի, հայ աղքատները, ոչինչ չը շահվեցան քաղաքային խորհրդի և վարչութեան վերոյիշեալ որոշումներից և ստիպվեցան հարուստների հետ հաւասար գնով հաց գնել. այն զանազանութիւնով, որ հարուստ և ազդեցութիւն ունեցող մարդիկ մի և նոյն գնով աւելի լաւ թխած ու մաքուր հաց էին ուտում, քան թէ աղքատները։

Եթէ թուրք և հայ աղքատները մի օգուտ ստացան այս նեղ հանգամանքներում, այդ էլ կայանում էր նորանում, որ թէ նահանգապետի և թէ քաղաքագլխի կողմից մասնաւոր մարդիկ նշանակվելով, կամաւոր նուէրներ ժողովեցին, որից, ինչպէս լսել եմ, գոյացաւ մօտ 2700 ռուբլ, և այդ գումարը՝ նահանգապետից նշանակված մասնաժողովի ձեռքով բաժանվեց հայ և թուրք աղքատներին։ Քաղաքային վարչութեան և մասնաւոր խորհրդին կարելի է շնորհակալութիւն յայտնել այն առանձին փոփոխութեան մասին, որ ալիւր բերելու համար նշանակած յանձնաժողովի նկատմամբ եղաւ։

Նախկին յանձնաժողովը չարդարացնելով քաղ. խորհրդի յոյսերը և պաշտօնազուրկ լինելով, ընկաւ քննութեան տակ և դորա տեղը նշանակվեց մի առանձին յանձնաժողով, որը կարճ միջոցում լցրեց քաղաքը ցորենով և ալիւրով, ու սորանով կոտրեց հացի գինը։

Նախկին յանձնաժողովի նախագահն էր պ. քաղաքագլուխը. քննիչ-յանձնաժողովը իր գրաւոր զեկուցման մէջ մեղադրեց յանձնաժողովի անդամ Միրզա Հիւսէյնին, որը յանձնաժողովի հաւատարմութիւնը ի չարն գործ դնելով, իր մօտ պահել էր երկար միջոց յանձնաժողովից ստացած փողերը և ժողովի նախագահին չարունակաբար հաւատացնելիս է եղել, թէ Թիֆլիսից այդ գումարով ալիւր է գնել տուել իր գործակատարի ձեռքով և թէ այսօր էգուց կը ստացվի. այդպիսով քաղաքի փողերը պահել էր իր մօտ երկար միջոց և արհեստական կերպով թանգութիւն ձգել քաղաքի մէջ, որպէս զի իր ամբարի ցորենը բարձր գնով վաճառէ և, ինչպէս ասում են, կարողացել էր հասնել իր նպատակին։

Քննիչ-յանձնաժողովը մեղադրում էր դորա հետ պ. քաղաքագլխին ևս, իբր յանձնաժողովի նախագահի, որը չափազանց հաւատ ընծայելով իր ստորադրեալին, արհեստական թանգութեան առիթ էր տուել. ուստի քննիչ-յանձնաժողովը, յայտնելով իր գրաւով կարծիքը ք. վարչութեան, սա իր կողմից յայտնելով խորհրդին, վերջինս վճռեց երեք օրվայ ընթացքում բացատրութիւն պահանջել յիշեալ անձերից։

Այս նպատակով ք. խորհրդարանում երկու փոթորկալից՝ բայց ըստ էութեան անօգուտ՝ նիստեր եղան։

Հարցը նորանում էր, թէ ո՞վ պէտք է քաղաքագլխի փոխարէն նախագահէ, քանի որ պ. քաղաքագլուխը մի և նոյն ժամանակ իբրև նախագահ յանձնաժողովի ենթարկվում է պատասխանատուութեան։ Երկար ու ձանձրալի վիճաբանութիւններից յետոյ վճռվեց, որ նախագահէ ոչ թէ այն իրաւասուն, որ ամենից աւելի ընտրական ձայն է ստացել, որովհետև ոչ պետական լեզուն և ոչ էլ օրէնքն է իմանում, այլ նախագահէ վարչութեան նոյն անդամը, որ համարվում է քաղաքագլխի տեղակալ. դա պ. Վ. Պապաջանեանցն էր։ Այս վերջինը, որ երկու անգամ նախագահեց երկար վիճաբանութիւններից յետոյ, կարդաց վարչութեան զեկուցումն ու որոշումն, որ կայացել էր քննիչ-յանձնաժողովի տեղեկագրի վրա և երևեցաւ որ վարչութեան կարծիքով ևս Հ. Մ. Հիւսէյնը պէտք է վճարէ քաղաքի կրած վնասը հացի թանգանալու մասին, և զրկվելու է իրաւական ձայնից։ Խորհուրդը լսելով վարչութեան վճռի տրամադրութիւնը, կամեցաւ իմանալ թէ մեղադրուածներն ինչով են արդարանում քննիչ-յանձնաժողովի տեղեկագրի առջև։—Պ. քաղաքագլուխը իր գրաւոր երկար բացատրութեան մէջ

Երիտասարդը նստեց նրա մօտ։

Նրանք մի քանի րոպէ մնացին լուռ. խօսք չէին գտնում խօսելու։ Լալան տակաւին խորին յափշտակութեան մէջ, մտաբերում էր այն սոսկալի տեսիլքը, որ այնքան վախեցրեց նրան։ Վարդանը մտածում էր, թէ ինչու այդ անմեղ, անփորձ աղջիկը աղաչում էր հեռացնել իրան հայրենի աշխարհից, ուր նա այնքան սիրված էր ընտանիքից. ինչու ցանկանում էր նա մի ուրիշ, հեռու երկրագնալ։ Մթթէ սէրը, սիրած տղամարդի սէրը ձգել էր նրան այս ցնորքների մէջ։ Բայց սէրը դեռ ևս նրա համար մի անորոշ և մթին զգացմունք էր։ Երիտասարդը հարցրեց.

—Ի՞նչով է վատ այդ երկիրը։

—Վատ է, շատ վատ է, պատասխանեց նա տխրութեամբ լի ձայնով.—տեսնում ես այդ դերեզմանը։

Նա ցոյց տուեց Սօնայի դերեզմանը։

—Գիտես, ով է դրած նրա մէջ։

—Գիտեմ...

—Գիտես, ինչպէս մեռաւ նա։

—Գիտեմ...

—Ես չեմ ուզում Սօնայի պէս մեռնել, Վարդան, ես վախենում եմ թոյնից... վախենում եմ դերեզմանից...

Կրկին խեղճ աղջկայ աչքերը լցվեցան արտասուքով։

—Ի՞նչու ես կարծում, Լալայ, թէ դու էլ Սօնայի պէս բախտ կունենաս, հարցրեց երիտասարդը նրա ձեռքից բռնելով։—Այդ մի ցաւալի դէպք էր, որ ամեն աղջկայ հետ չէ պատահում։ Ի՞նչու ես դու մտածում, որ մի և նոյնը կարող է և քեզ պատահել։

—Ես այդ միշտ մտածում էի...միշտ սպասում էի...հէնց այն օրից, երբ սկսեցի հասկանալ թէ ինչու են ինձ տղայի հագուստով պահում....Այստեղ աղջիկ լինելը Աստուծոյ պատիժն է....մի յանցանք է....մանաւանդ սիրուն աղջիկ լինելը.... Լսիր, Վարդան, ես մի ծանօթ աղջիկ ունէի, որին շատ սիրում էի, նա շատ լաւ աղջիկ էր և մեր դրացի էր։ Մայրը ամեն օր ծեծում էր նրան, թէ ինչու նա սիրուն ծնվեց, թէ ինչու նա օրըստօրէ գեղեցկանում էր։ «Դու, ասում էր մայրը, մեր գլխին մի պատուհաս կը բերես...և Նարգիսը լաց էր լինում.—այդպէս էր նրա անունը։ Մայրը չէր թողնում Նարգիսին, որ նա իր երեսը լուանայ, որ մազերը սանդրէ և միշտ պատառոտած հագուստով էր պահում։ Վերջը քրդերը տարան Նարգիսին։ Քանի օր առաջ ես տեսայ նրան, ա՛խ, որքան տգեղացել էր...այժմ նա սիրուն չէր.... Ասում էր, Ստեփանիկ, շատ վատ է քրդի կին լինելը...և լաց էր լինում....

Լալան ինքն էլ սկսեց լաց լինել։ Երբ մի փոքր հանգստացաւ, հարցրեց.

—Վարդան, դու ինձ այստեղից կը տանես, այնպէս չէ՞։

—Կը տանեմ, միամիտ կաց։

Շուտ տար, կուզես, հէնց հիմայ տար, ես կը գամ քեզ հետ, ուր որ տանելու լինես։

—Մի քանի օր սպասիր, Լալայ, մինչև հօրդ հետ կը խօսեմ։

Այսպէս նստած, նրանք երկար և երկար խօսում էին գիշերային մթութեան մէջ, մինչև տրիտութեան զգացմունքը տեղի տուեց սիրոյ բերկրութեան զգացմունքին։

Ժ.

Միւս առաւօտ Վարդանը զարթնեց շատ ուշ, որովհետև գիշերը մեծ մասը անց էր կացրել անքուն։ Մի գաղտնի ուրախութիւն փայլում էր նրա փոքր ինչ գունաթափ դէմքի վրա։ Նա տեսաւ, որ պ. Դուդուկջեանը օդայում չէ, միայն մի անկիւնում դրած էր նրա ճանապարհորդական խուրջինը։ Ո՞ւր էր գնացել այդ մարդը։ Վարդանը հէնց առաջին օրից նկատեց, որ պարոնը մի անփորձ երիտասարդ էր, որին պէտք էր պահպանել և աչքից հեռու չը թողնել։

Ծերունու տանը ամեն ոք զբաղված էր իր սովորական գործով։ Խաչօի որդիները գնացել էին իրանց դաշտային մշակութիւնները հոդալու։ Ինքը ծերունի հայրը դուրս էր եկել, որ տեսնէ, թէ ինչ են չինում որդիները։ Հարսները զբաղված էին տնային տնտեսութիւնով։ Ոչ ոք անգործ չէր։ Միայն Հայրապետը մնացել էր տանը։ Նա յարմար ժամանակ համարեց մտնել Վարդանի մօտ, մտածելով, գուցէ նրանից մի բացատրութիւն կը լսէ Լալայի մասին և առիթ կունենայ քրոջ մասին խօսելու։ Նրա միւս եղբայրները, բացի Ապօից, այլ ևս Լալայի մասին չէին մտածում, և համարեա մոռացել էին, թէ ինչ վտանգ է սպառնում նրան քուրդ բէկից։ Նրանք թողել էին Լալային իր բախտին, կրկնելով այն ճակատագրական խօսքը, թէ ինչ որ Աստուած կամեցել է այն կը լինի։ Հայրը դեռ ոչինչ լսած չէր։ Նա մտածում էր ստուգել Թօմաս էֆէնդու անցեալը, որին համարում էր իր Լալայի ապագայ փեսան։

Երբ Հայրապետը մտաւ օդան, Վարդանը հարցրեց նրանից.

—Ո՞ւր է գնացել իմ նոր ընկերը։

Հայրապետը հասկանալով, որ պ. Դուդուկջեանի մասին է հարցնում, պատասխանեց.

—Զարմանալի մարդ է այդ քո նոր ընկերը, վաղ-առաւօտեան, դեռ արևը չը ծագած, վեր կացաւ, երկայն կօշիկները հագաւ, առանց լուացվելու, առանց սանրվելու, և առանց նախաճաշիկ ուտելու, իր ծանր դաւազանը վեր առաւ, և տնից դուրս գնաց։ Մենք հարցրինք, ո՞ւր ես գնում, նա ոչինչ չը պատասխանեց, գլուխը շարժեց և հեռացաւ։

—Ո՞ւր գնաց, հարցրեց Վարդանը անհանգստութեամբ։

—Չը գիտեմ, միայն ես գիւղի մէջ տեսայ, նա հանդիպեց մի կիսամերկ և ոտաբոբիկ աղջկայ, որ գնում էր դեռից ջուր բերելու. «ինչու ես այսպէս հագնվել, հարցրեց նա աղջկանից, քո հասակում անվայելուչ է այսպէս հագնվելը։ Աղջիկը պատասխանեց, թէ իր ծնողները աղքատ մարդիկ են։ Նա հանեց իր քսակից մի ոսկի և տուեց աղքատ աղջկան։ Ես կարծում եմ, Վարդան, այդ վերջին դրամն էր, որ նա ունէր։

—Կարելի էր, պատասխանեց Վարդանը մտայուղութեան մէջ,—բայց յետոյ ո՞ւր գնաց։

—Յետոյ մօտեցաւ նա մի խումբ գիւղացիների, որ նոր էին դուրս եկել ժամից, և հաւաքված եկեղեցու դրանը, խօսում էին հարկերի բաժանման վրա։ Նա խօսակցութեան մէջ մտաւ և սկսեց բացատրել գիւղացիներին, թէ նրանք վճարում են կառավարութեանը աւելի քան թէ պէտք է վճարել, բայց իրանց հասարակական գործերի մասին ամենևին հոգ չեն տանում։ Խօսում էր աղջկանց և տղայոց դպրոցների մասին, որոնցից զուրկ են մեր գիւղացիները. խօսում էր ինչ-որ ընկերութեան մասին, որ կարող էր բարւոքել գիւղացու տնտեսական վիճակը. խօսում էր ինչ-որ հասարակաց դրամարկղի մասին, որտեղից գիւղացին կարող էր էժան տոկոսով փող վերցնել կարօտութեան ժամանակ,—ո՞վ է իմանում, հազար ու մէկ այս տեսակ բաների վրա էր խօսում։

—Ի՞նչ պատասխանեցին գիւղացիները, հարցրեց Վարդանը հետաքրքրվելով։

—Գիւղացիները ծիծաղեցին, հռհռացին և ոչինչ չը պատասխանեցին։ Մէկը նրանցից ասաց իր ընկերին՝ «այդ մարդը խենթ է»։

—Փառք Աստուծոյ, խենթը մենակ ես չեմ եղել, ասաց Վարդանը ծիծաղելով,—ես կարծում էի, մենակ ինձ են խենթ համարում։—Յետո՞յ։

—Յետոյ գիւղացիներից մէկը հրաւիրեց նրան մտնել իր հետ դահլիճը մի բաժակ արաղ խմելու։ Նա ընդունեց հրաւէրը։ Այնտեղ գտնվում էր բոլորովին հարբած մի բաղմութիւն։ Նա ինքը շատ փոքր խմեց, բայց վճարեց բոլորի համար։ Այնտեղ ևս սկսեց իր քարոզները գիւղացու բարօրութեան մասին և սկսեց բացատրել նրա թշուառութեան պատճառները։ Նա խօսում էր տաք և ոգևորված կերպով։ Ես առաջին անգամ զգում էի իմ մէջ, թէ ինչ մեծ ներգործութիւն ունի խօսքի ուժը։ Բայց գիւղացիները արհամարհանքով լսում էին նրան։ Մէկը հարցրեց նրանից, թէ «ինչ պաշտօն, ինչ աստիճան ունիս». երբ

առաջին նիստում բողոքեց քննիչ-յանձնաժողովի առ ինքն յայտնած մեղադրանքների դէմ, բայց մի և նոյն ժամանակ ապացուցեց քննիչ-յանձնաժողովի նկատողութիւնները դէպի Մ. Հիւսէյինը, յայտնելով որ չորս անգամ խաբվել է վերջինի կեղծ ու պատիր չողոքորթ խոստումներից։

Պ. քաղաքագլխից յետոյ պէտք է Մ. Հիւսէյինը տար իր բացատրութիւնը. բայց սա յայտնեց թէ՝ մինչեւ երկու ժամ առաջ է ստացել վարչութեան անդամ Պապաջանեանցի ստորագրութիւնով մի յայտագիր, որի մէջ ասուած է, որ երեք օրից յետոյ պէտք է տայ Մ. Հիւսէյին իր գրաւոր բացատրութիւնը։ Այս անզգոյշ դէպքից օգուտ քաղելով, Մ. Հիւսէյինը չը պատասխանեց խորհրդին և այսպէս՝ պ. Նախագահի անզգոյշ ստորագրութեան առթիւ, 5 ժամ անօգուտ վիճաբանելուց յետոյ՝ Միրզայ Հիւսէյինին կրկին երեք օր ժամանակ տրվեցաւ, որ ներկայացնէ իր գրաւոր բացատրութիւնը և նիստը փակվեց։

Այդ երեք օրվայ ընթացքում կարծիքների մէջ շատ փոփոխութիւններ եղան յօգուտ Մ. Հիւսէյինի. սա այնպիսի գլաւոր փաստեր չունեց, որպիսիները չէր ունեցել քննիչ-յանձնաժողովին ներկայացնելու. իր բացատրութիւնը գրելու համար փաստաբան վարձեց, և այս վերջինը լինելով մի և նոյն ժամանակ իրաւաստ, պաշտպան հանդիսացաւ երկրորդ նիստում եւ. բաւական ձայներ մուրաց և մինչև անգամ, պ. քաղաքագլուխին ևս երկրորդ նիստի մէջ զարմանալի փոփոխութիւններ էր արել իր կարծիքների մէջ դէպի Մ. Հիւսէյինը՝ հակառակ իր այն մեղադրական հիմունքներին, որ նախորդ նիստի մէջ էր արել թէ գրաւոր և թէ բանաւոր կերպիւ.... Պ. քաղաքագլուխը Մ. Հիւսէյինի պարտականութիւնները երկրորդ նիստի մէջ վերաբերում էր արտաքին հանգամանքների և ոչ նորա բարոյական պակասութիւններին. այն ինչ Մ. Հիւսէյինի բարոյականութեան դէմ բողոքում էին բոլոր հայ իրաւաստները, վարչական ատեանը և նոյն ինքն պ. քաղաքագլուխը երեք օր առաջ։ Այսպիսի հակասական փոփոխմտութիւնների պատճառով, երկրորդ նիստը տևեց ղկնի ճաշուայ ժամի 6½—2-ը գիշերվայ ժամի. ի վերջոյ քաղ. խորհուրդը 26 ձայնով 10 ձայնի դէմ վճռեց առանց հետևանքի թողուլ քննիչ-յանձնաժողովի մեղադրանքը պ. քաղաքագլխի դէմ, իբր հաց մատակարարող ժողովի նախագահի, որ իրաք ոչինչ բանում չէր մեղադրվում, բայց նորանից որ՝ նախ՝ չափազանց մեծ հաւատ էր ընծայել Մ. Հիւսէյինին և երկրորդ՝ առանց հարցնելու քաղ. վարչութեան ատենին և խորհրդին 10,000 բուբլի էր ուղարկել Թիֆլիս գեներալ Պեչչուրովին և ալիւր բերել տուել, որը դժբաղդաբար շատ թեփոտ և խոշոր ու դառը դուրս եկաւ, ինչպէս վկայեցին մի քանի իրաւաստներն ևս։

Իսկ Մ. Հիւսէյինին աղատեց խորհուրդը դատաստանին յանձնելուց 19 ձայնով 17 ձայնի դէմ, և ընդհակառակը, 12 ձայնի դէմ 23 ձայնով վճռեց պահանջել Մ. Հիւսէյինից այն բոլոր վնասը, որ քաղաքը կրել է նրան հաւատալով, եթէ որ նա չը կարողանայ ապացուցանել իր առաջարկած փաստերի ստուգութիւնը։

Ուրեմն առանց հետևանքի մնաց ք. վարչութեան զեկուցումն ևս, որ հիմնած էր քննիչ-յանձնաժողովի և պ. քաղաքագլխի նախորդ նիստի մէջ յայտնած փաստերի վրա և որով պահանջում էր վարչութիւնը զրկել Մ. Հիւսէյինին իրաւասուի պաշտօնից և պահանջել նորանից 1600 ր. (մեր կարծիքով 7—8000 բուբլի պէտք էր պահանջել)։

Սկիտնի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Պ. Ա. Կամսարական, ուղարկելով մեզ ՍՂՆԱԽԻՑ 7 բուբլ յօգուտ Վանի սովատանջների, որ նա հաւաքել է հանգանակութեամբ յիշեալ քաղաքում, գրում է մեզ։ «Այս գումարը չնչին է, բայց եթէ փոքր ի չատէ ծանօթ լինէիք այստեղի հայ բնակիչների հետ, կը տեսնէիք, որ սրանց վրա միայն լոկ հայ անուն է, իսկ հոգով, լեզուով, գրով և սովորութիւններով վրացիներ են։ Ունեն միայն մի ընդհանուր հայոց յատկութիւն՝ արծաթասիրութիւն։ Այստեղի հայ քահանաներն անդամ խօսում են միշտ վրացերէն լեզուով։»

—

Այսօր «Մշակի» բաժանորդների թիւը հասաւ 903-ի, առանց հաշուելու հատով ծախված համարները։ Եթէ հաշուենք որ ամեն օր Թիֆլիսում մօտ 50 հատ է ծախվում «Մշակը», ուրեմն մեր բոլոր բաժանորդների թիւը կը լինի 950։ Ստորագրութիւնը դեռ շարունակվում է։

—

ԹԻՖԼԻՍՈՒՄ բնակվող տիկին Կատարինէ Ալիխանեանց ուղարկել է մեզ 100 բուբլ յօգուտ Վանի սովատանջների և նոյն նպատակով ստացանք 100 բուբլ Բաղդասար և Վասիլ Եղիազարեանց եղբայրներից։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴՈԿՏՈՐ ՄՈՐԴՄԱՆԻ ՆԱՄԱԿԸ

—

Հանգուցեալ արժանայիշատակ պ. Մորդմանի որդի և յաջորդ մեծ. դոկտոր Մորդման հետևեալ հնագիտական կարևոր տեղեկութիւն է տուել Քարբերդի մէջ գտնված հին արձանագրութեանց վրա, ուղղելով իր նամակը Կ. Պոլսի պատրիարքարանի քարտուղար պ. Մինաս Չէրազին։ Ահա նամակը։

«Մայրաքաղաքի թերթերը քանիցս անգամ խօսած ըլլալով Քարբերդի մէջ մօտերս գըտնուած հնութեանց նկատմամբ, կը փութամ հաղորդել Ձեզ Լատին արձանագրութեան բացատրութիւնն, որոյ խիստ հաւատարիմ և ճիշդ մէկ օրինակը ցոյց տրուեցաւ ինձ այս օրերս։ Նախ դիտել կուտամ թէ արձանագրութիւնը բնաւ խանգարուած կամ անընթեռնլի չէ. ուստի հարկ է խոստովանիլ թէ այս հաղորդուած օրինակը իւր ճշդութեամբ շատ գերազանց է այն բազմաթիւ օրինակութիւններէն, որք ստէպ դաւառներէն մեզ կը յղուին։

«Յիշեալ հնութիւնն յիշակերտ մը կամ մանաւանդ արձան մ'է, զոր ի պատիւ Ներոն կայսեր կանգնած է Գաղղիական Երրորդ լեգէոնն, որ Պարթևաց դէմ մարտնչելու գընացած էր ընդ հրամանատարութեամբ Կորբուլոնի և Աւրելիոս Փուլվոսի։ Մեզ հասած արձանագրութիւնը ձօնին պատճէնը կը ներկայացնէ։ Ահա թարգմանութիւնն.

«Ի պատիւ Ներոնի, որդի Կղոդիոս Աստուծոյն, հրամանատար և կեսար, գերագոյն քահանայապետ, ԺԱ. անգամ Տրիբուն, Դ. անգամ Հիւպատոս, Թ. անգամ հրամանատար կարգված, Հայր Հայրենեաց,—կանգնեալ ի ձեռն գաղղիական երրորդ լեգէոնին ընդ հրամատարութեամբ Կնէիոս Դոմիտիոս Կորբուլոնի, նահանգապետի և կայսերական փոխանորդի։»

«Հռոմայեցիք և Պարթևք Հայաստանի գահուն վրա գերիշխանութեան իրաւունքն իրարու ձեռքէ կը յափշտակէին շարունակ։ Ներոն կայսեր Հռովմայ գահը բարձրացած միջոցին, Ողոգէս Ա. յաջողած էր իւր Տիրիթ (Տրդատ) եղբայրն Հայաստանի վեհապետ կարգելու։ Ակէ ծագեցաւ այդ երկու պետութեանց մէջ կատաղի պատերազմ մը, զոր Տակիտոս նկարագրած է մանրաման։ Երկար մաքառումներէ յետոյ վէճը դադրեցաւ Տիրիթի և Կորբուլոնի մէջ դաշնագիր մը հաստատելով։ Հռոմ աննշան ձևակերպութեամբ մը գոհ եղաւ։ Եփրատի մէկ կղզեկին մէջ՝ Տիրիթ իւր թագը Ներոն կայսեր արձանին ստորոտը դրաւ։ Գրեթէ յաղթական ուղևորութիւն մ'ըրաւ Փոքր Ասիոյ, Յունաստանի և Իտալիոյ մէջէն 'ի Հռոմ երթալու և հոն կայսեր ձեռքէն թագն ընդունելու համար, ժողովրդային շքեղ հանդէսներու մէջ։ Հռոմ հրճվեցաւ որ համաձայնութեամբ մը վերջ դրաւ անօգուտ պատերազմ մը, որոյ համար միլիոններ վատնած էր։

«Քարբերդի մէջ գտնուած հնութիւնը կը թուի ապացուցանել թէ դաշնագրին առաջին տրամադրութիւնը կատարուած է Եփրատայ ափանց վրա՝ այդ քաղաքին մօտ, և հաւանական է որ վերոյիշեալ մարմարիոնը նշխար մը լինի այն արձանին, որուն առջև հպատակութեան ցոյցը տեղի ունեցաւ։ Արձանագրութեան թուականն է կայսեր Թ-րդ հրամանատարութիւնն և ԺԱ-րդ տրիբունութիւնն, այսինքն Քրիստոսի 64 թուականն։ Աւելորդ կը համարիմ մանրամասն հետազօտել աստ Ներոնի կայսրութեան ժամանակագրութիւնն և ուրիշ խնդիրներ, զորս յաջող կերպով կը լուծէ այդ կարևոր գիւտը։»

(Մասիս)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՍԵՓԱԿԱՆ ԹՂԹԱԿՑԻՑ

ԱԽԱԼՑԽԱ, 20 մարտի։ Հայ-Կաթոլիկ հոգևոր վարչութեան նախագահ հայր Շահինեան հրման ուղարկեց իրան ստորագրված եկեղեցիներին հետևել «Մշակի» համարներին և հանգանակութիւններ բացանել յօգուտ Վանի սովատանջների։ Հաւաքված նուիրատուութիւնները հայր Շահինեանի հրամանով, պէտք է յանձնվեն «Մշակի» խմբագրութեանը։

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԼՕՆԴՈՆ, 18/30 մարտի։ Տեղեկացնում են, որ Աբդուրախման դուրս եկաւ Կուդուզից Կլիօրիի վրա։ Նեշերադ գնում է Կաբուլ, որտեղից բնակիչները խումբերով գաղթում են։ Պարլամենտական ընտրութիւնները սկսվեցան։ Տոսն և մէկ ընտրողական շրջաններում առաջարկված կանդիդատները ընտրվեցին առանց ընդդիմադրութեան։

ՓԱՐԻԶ, 18/30 մարտի։ Հրամաններ են հրատարակված եղուիտների և նրանց ուսումնարանների փակելու վերաբերութեամբ։ Կոնդրեգացիաների վրա պարտաւորութիւններ է դրված կանոնադրութիւններ ներկայացնել, որպէս զի հրման ստանան իրանց գործունէութիւնը սկսելու համար։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

պատասխան ստացաւ, թէ ծառայութեան մէջ չէ գտնվում, խիստ լրբաբար ասաց նրան. «էլ ինչ ես դուրս տալիս»....

—Այո, այդ հասարակութեան վրա ազդելու համար անպատճառ պէտք է կամ մուղիր, կամ գայմագամ և կամ Թոմաս էֆէնդու նման մուլթեզիմ լինել։ Հասարակ գիտնականը ինչ նշանակութիւն ունի նրանց աչքում...խօսեց Վարդանը խորին տխրութեամբ։—Պատմիր, Հայրապետ, շատ հետաքրքիր է։

—Ես, շարունակեց Հայրապետը, բռնեցի նրա ձեռքից և համարեա զօռով դուրս բերեցի դահվէանից, վախենում էի, որ անկարգութիւն կը պատահի։ Դրսում նա ինձ ասաց. «այսպիսի տեղերում աւելի հեշտ է ճանաչել ժողովրդին. հարբած դրութեան մէջ նա բացում է իր սիրտը»... Մենք շարունակեցինք գնալ դիւղի միջով։ Նրա ուսից քարշ էր ընկած մի կաշեայ պայուսակ, որ լիքն էր զանազան փոքրիկ տետրակներով։ Նա այդ տետրակները բաժանում էր հանդիպած գիւղացիներին. ոմանք չէին ընդունում, ասելով, թէ կարդալ չը գիտեն, իսկ ոմանք ընդունում էին, որոնք նոյնպէս կարդալ չը գիտէին։ Այս վերջինների մէկից ես հարցրի, թէ ինչ պիտի անես, որ առնում ես։ Նա պատասխանեց. «Թուղթ է, կը տանեմ տանը պէտք կը գայ. մայրս բուրնօթի (քթախոտ) կը փաթաթէ մէջը։

Վարդանի դէմքը աւելի տխուր արտայայտութիւն ընդունեց, կարծես, մի ներքին ցաւ սկսեց տանջել նրան։

—Դու ունէս այդ տետրակներից, հարցրեց նա։

—Ունեմ, երկու հատ ես վեր առայ։

Վարդանը թերթեց տետրակները, մի փոքր կարդաց, և ասաց վրդովված ձայնով.

—Այսպիսի տետրակների տարածելը ազգէտ ժողովրդի մէջ յիմարութիւն է...։—Յետոյ ո՞ւր գնաց նա։

—Ինձ հետ միասին դուրս եկաւ մեր գիւղից, խնդրեց, որ ես նրան մենակ թողնեմ։ Ես բաժանվեցայ։ Նա բռնեց առաջին հանդիպած ճանապարհը և սկսեց դիմել դէպի մի ուրիշ գիւղ, որ հեռուից երևում էր։ Ես երկար կանգնած, նրա ետևից նայում էի. նա այնպէս շտապում էր, կարծես, այնտեղ սպասում լինէին նրան։ Ես կարող եմ երդվել, որ նա ինքն էլ չը գիտէր, թէ ուր էր գնում. անդադար մոլորվում էր, անդադար ճանապարհից դուրս էր գալիս։

Վերջին խօսքերը Հայրապետը արտասանեց փոքր ինչ ծաղրական կերպով։

—Նա, սիրելի Հայրապետ, ասաց Վարդանը,—ձեր ձորի ոլոր-մոլոր ճանապարհներին կարող է ծանօթ չը լինել, բայց կեանքի ճանապարհի մէջ, հաւատացնում եմ քեզ, նա մի հմուտ ուղեցոյց է։

—Ես էլ մի այսպիսի բան նկատում եմ նրա մէջ, պատասխանեց Հայրապետը ղղջալով իր անտեղի ծաղրածութեան վրա,—երևում է, որ շատ է կարդացել։

—Բացի կարդալը նա խիստ բարի և աշխատասէր մարդ է։

Հայրապետին այժմ շատ չէր հետաքրքրում անծանօթ երիտասարդը. նա առիթ էր որոնում խօսելու իր քրոջ մասին։ Սառայի պատմութիւնից յետոյ, թէ Վարդանը և Լալան սիրում են միմեանց, նա միշտ սպասում էր, թէ Վարդանը վերջապէս կը յայտնէ իր սէրը, որովհետև Հայրապետից աւելի մտերիմ մարդ չունէր նա այս տան մէջ։ Բայց Վարդանը այժմ, կարծես, մոռացաւ Լալային, և լսելով Հայրապետի խօսքերը պ. Դուդուկչեանի մասին, նա սաստիկ մտատանջութեան մէջ ընկաւ։ Նա վերկացաւ, կամենում էր դուրս գալ օդայից։

—Ո՞ւր ես գնում, հարցրեց Հայրապետը։

—Գնում եմ պատելու պ. Դուդուկչեանին, ասաց նա,—դու իզուր բաց թողեցիր նրան, Հայրապետ, նա շատ անփորձ տղայ է։

Երկուսը միասին դուրս եկան օդայից։

—Անցնենք ախոռատունը, ասաց Վարդանը,—քանի օր է, չեմ տեսել իմ ձիերին։

Նրանք սկսեցին դիմել դէպի ախոռատունը։ Բակում Վարդանը պատահեց Լալային, որ նստած պարտէզի միջով հոսող վտակի ափի մօտ, լուացվում էր։ Երևի, նա էլ նոր էր դարթել քընից։

—Բարի լոյս, Ստեփանիկ, կոչեց հեռուից Վարդանը։

Լալան ոչինչ չը պատասխանեց, միայն գլխի շարժումով ընդունեց նրա ողջոյնը և խորհրդաւոր կերպով ժպտեցաւ։

Ախոռատան մէջ կապած էին Վարդանի երեք ուժեղ ձիաները, որոնցից մէկը իրանն էր, իսկ միւս երկուսի վրա նստում էին նրա երկու ծառաները՝ Սաքօն և Եղօն,—երկու հսկայ տղամարդիկ, որ միշտ անբաժան ուղեկիցներ էին Վարդանի հետ։

—Սաքօ, ասաց նա ծառաներից մէկին,—այսօր ձիաները նալել կը տաս և ամեն ինչ կը պատրաստես ճանապարհի համար, մենք երկար չենք մնալու այստեղ։

Յետոյ նա մօտեցաւ ձիաներին, ձեռքը քսեց նրանց դեղեցիկ պարանոցի վրա, և լուռ նայում էր, կարծես, կամենալով գիտենալ, թէ բաւական հանգստացել են, կարող են մի քանի օրվայ ճանապարհը մի գիշերվայ մէջ անցկենալ։

Յետոյ նա հրամայեց ձիաներից մէկը թամբել, որը շուտով պատրաստեցին, նստեց, Հայրապետից հարցնելով.

—Ո՞ր կողմը գնաց պ. Դուդուկչեանը։

Հայրապետը ցոյց տուեց նրան գնացած տեղը, և Վարդանը քշեց ձին դէպի այն կողմը։

Նրա հեռանալուց յետոյ Հայրապետը ընկաւ տխուր մտածութիւնների մէջ. «ինչու է նալել տալիս Վարդանը իր ձիաները, այս ինչ ճանապարհի պատրաստութիւն է, միթէ նա պիտի թողնէ և գնայ առանց Լալայի մասին մի բան խօսելու, առանց նրան բախտաւորացնելու, և վերջապէս ինչու նա այնպէս սաստիկ հոգածութեան մէջ ընկաւ, երբ լսեց պ. Դուդուկչեանի «երեխայական» վարմունքը,—այս մտածութիւնները այն տատուելով։ Հռոմ աննշան ձևակերպութեամբ մը գոհ եղաւ։ Եփրատի մէկ կղզեկին մէջ՝ Տիրիթ իւր թագը Ներոն կայսեր արձանին ստորոտը դրաւ։ Գրեթէ յաղթական ուղևորութիւն մ'ըրաւ Փոքր Ասիոյ, Յունաստանի և Իտալիոյ մէջէն 'ի Հռոմ երթալու և հոն կայսեր ձեռքէն թագն ընդունելու համար, ժողովրդային շքեղ հանդէսներու մէջ։ Հռոմ հրճվեցաւ որ համաձայնութեամբ մը վերջ դրաւ անօգուտ պատերազմ մը, որոյ համար միլիոններ վատնած էր։

«Քարբերդի մէջ գտնուած հնութիւնը կը թուի ապացուցանել թէ դաշնագրին առաջին տրամադրութիւնը կատարուած է Եփրատայ ափանց վրա՝ այդ քաղաքին մօտ, և հաւանական է որ վերոյիշեալ մարմարիոնը նշխար մը լինի այն արձանին, որուն առջև հպատակութեան ցոյցը տեղի ունեցաւ։ Արձանագրութեան թուականն է կայսեր Թ-րդ հրամանատարութիւնն և ԺԱ-րդ տրիբունութիւնն, այսինքն Քրիստոսի 64 թուականն։ Աւելորդ կը համարիմ մանրամասն հետազօտել աստ Ներոնի կայսրութեան ժամանակագրութիւնն և ուրիշ խնդիրներ, զորս յաջող կերպով կը լուծէ այդ կարևոր գիւտը։»

(Մասիս)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՍԵՓԱԿԱՆ ԹՂԹԱԿՑԻՑ

ԱԽԱԼՑԽԱ, 20 մարտի։ Հայ-Կաթոլիկ հոգևոր վարչութեան նախագահ հայր Շահինեան հրման ուղարկեց իրան ստորագրված եկեղեցիներին հետևել «Մշակի» համարներին և հանգանակութիւններ բացանել յօգուտ Վանի սովատանջների։ Հաւաքված նուիրատուութիւնները հայր Շահինեանի հրամանով, պէտք է յանձնվեն «Մշակի» խմբագրութեանը։

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԼՕՆԴՈՆ, 18/30 մարտի։ Տեղեկացնում են, որ Աբդուրախման դուրս եկաւ Կուդուզից Կլիօրիի վրա։ Նեշերադ գնում է Կաբուլ, որտեղից բնակիչները խումբերով գաղթում են։ Պարլամենտական ընտրութիւնները սկսվեցան։ Տոսն և մէկ ընտրողական շրջաններում առաջարկված կանդիդատները ընտրվեցին առանց ընդդիմադրութեան։

ՓԱՐԻԶ, 18/30 մարտի։ Հրամաններ են հրատարակված եղուիտների և նրանց ուսումնարանների փակելու վերաբերութեամբ։ Կոնդրեգացիաների վրա պարտաւորութիւններ է դրված կանոնադրութիւններ ներկայացնել, որպէս զի հրման ստանան իրանց գործունէութիւնը սկսելու համար։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ատելեան պաշարեցին նրան, որ բոլորովին շուարած մնաց։

Վարդանին ճանապարհ դնելուց յետոյ, երբ Հայրապետը վերադառնում էր տուն, նրան պատահեց իր կինը՝ Սառան, որ կաթի ահագին ամանը ձեռքում, գալիս էր փարախից։

—Ոչինչ չասաց քեզ Վարդանը, հարցրեց Սառան կանգնելով, և կաթի ամանը դնելով գետին։

—Զասաց, պատասխանեց Հայրապետը տխուր ձայնով,—նա այժմ բաւական ծածկամիտ է դարձել...

—Ես ամեն բան գիտեմ, խօսեց Սառան ուրախութեամբ,—նստիր, կը պատմեմ քեզ։

Այր և կին նստեցին մի կամնասայլի վրա, որ ձըգած էր բակի մէջ։

Սառան պատմեց, թէ Լալան բոլորը խոստովանեց նրան, թէ այս գիշեր, երբ տանեցիք քնած էին, նա պարտէզում գաղտնի տեսութիւն է ունեցել Վարդանի հետ։ Լալան չը թագցրեց այդ տեսութեան և ոչ մի մանրամասնութիւնը։ Վերջը Վարդանը ասել է Լալային, թէ կը խօսէ նրա հօր հետ, եթէ հայրը չը համաձայնվի Լալային իրան տալ, կը փախցնէ և այնպէս կը տանէ։

Ուրեմն դրա համար նա հրամայեց իր ծառաներին պատրաստել ձիաները, խօսեց Հայրապետը, մատը կծելով։

—Ի՞նչ կայ, թող փախցնէ, թող տանէ, աւելի լաւ, պատասխանեց Սառան,—եթէ նա չը տանէ, անօրէն քուրդը իսօ կը տանէ։

—Ես ընդդէմ չեմ... պատասխանեց Հայրապետը,—բայց....

Խեղճ մարդիկ, ուրիշ ժամանակ իրանց աղջկան կը նահատակէին, կը սպանէին, եթէ գիտենային, որ նա գաղտնի տեսութիւններ է անում մի տղամարդի հետ, որ դեռ իր ամուսինը չէ։ Իսկ այժմ ակամայ խոնարհվում էին դառն հանգամանքների առջև...։

(Կը շարունակվի)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մամուլի տակից դուրս եկաւ և ծախվում է Կենտրոնական գրավաճառանոցում մի գրքոյկ՝ պ. Ա. Քիշմիշեանցի—«ԳՐՕՇՕ» և ԿՐԱԿԻ ՇՈՒՐՋԸ» վէպերով: Գրքոյկի գինն է՝ երեսուն կօպ.: Բոլոր արդիւնքը յատկացրած է յօգուտ ՎԱՆԱՁ ՍՈՎԵԼՈՑ:

3—4

Въ Кавказскомъ Обществѣ Сельскаго Хозяйства въ Тифлисѣ имѣется для продажи яйчки шелковичныхъ червей французской породы, воспитанныя Барономъ Бахомъ, въ окрестностяхъ Тифлиса, по 35 коп. за золотникъ.

Иногородныя обращаются съ требованіями въ Общество съ препровожденіемъ слѣдуемыхъ денегъ, почтовыя расходы на счетъ Общества.

3—3

ՆԵՐԿԱՅ 1880 ԹԻՈՒՄ ԿԸ ՏՊԱԳՐՎԻ

„ԿԱՅԾԵՐ“

ՎԷՊ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ

Հեղինակութիւն ՐԱՖՖԻ

Վէպը բաղկացած կը լինի երկու առանձին հատորներից իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրված երեսներ: Ամեն մէկ հատորի գինն է 1 ր. 50 կ., իսկ միասին 3 ր.: Մէկ հատորի համար առանձին ստորագրութիւն չէ ընդունվում:

Ստորագրվել կարելի է ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ այն պարոնների մօտ, որոնք բարեհաճել են բաժանորդներ հաւաքել «ԿԱՅԾԵՐԻ» տպագրութեան համար, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ պէտք է դիմել «Մշակի» խմբագրատանը Յ. ՄԷԼԻՔ-ՅԱԿՈԲԵԱՆԻՆ:

Մամուլի տակից դուրս եկաւ դօկտոր Բօկի «Ուսումն առողջապահութեան» գրքոյկի հայերէն թարգմանութիւնը: Գրքի պահեստը գտնվում է Զաքարիա Գրիգորեանցի Կովկասեան Գրավաճառանոցում: Գինն է 35 կօպ.

Պ. ԱԴԱՄԵԱՆԸ ցանկանում է ԳԾԱԳՐՈՒԹԵԱՆ և գոյների բաղադրութեամբ ՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ դասեր տալ: Պայմանների մասին կարելի է նրա հետ խօսել նրա բնակարանում, Գոլովինսկի պրոսպեկտի վրա, Մուխրանովու տանը, Կլուբի տակ, առաւօտները 10—12 ժամ, և երեկոները 5—8 ժամ: Դասերը կարող է տալ թէ իր բնակարանում և ցանկացողների տները այցելելով: Նոյնպէս ընդունում է պատուէրներ ԿԵՆԴԱՆԱԳԻՐՆԵՐ նկարելու համար:

3—10

Օրերումս գուրս եկան մամուլի տակից և վաճառվում են Զ. Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանոցում:

1. Ադամեան—քերթուածք և թարգմանութիւնք. Տփխիս 1880 թ. գինն է 1 ր. 25 կ.:
2. Դօկտօր Բօկ—Ուսումն առողջապահութեան Տփ., 80 թ. — 35 կ.:
3. Ֆրէյդուն—Տաւիղ յինաղի Տփ. 80 թ. — 30 կ.:
4. Ղուկասեանց—ընդհանուր պատմութիւն հայոց դպրոցների համար, հ. ա. Տփ. 80 թ. — 80 կ.:
5. Գամառ-Ռաթիպայ—մանկական երգեր 80 թ. անկազմ — 15 կ.:
6. Նոյնը կազմած — 25 կ.:
7. Սիլվիո Փէլլիքօի Ֆրանկիսկէ (Ֆրանչէսկա դա Ռիմինի). Դանտէի Ֆրանչէսկան, Լէօփարդիի առ Լտալիան. Տարօնոյ ծերը: Ա. Ս. Ե. Պ. Տփ. 80 թ. գինը է — 70 կ.:

5—10

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գավրօնսկի կանանց հիւանդ. Գօրալեվիչ ներքին հ., Բօտինեանց կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շտեմբօրսկի վիներական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգիական հ., Վզօրով վիներական և բողազի հ., Բէյլս աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլեադով, Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ և Բուդկօվսկի ներքին հ., Շտեյմբօրսկի վիներական և կաշու հ., Աստուածատուրով կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վզօրով վիներական և բողազի հ., Բօտինեանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրօնսկի կանանց հ., Մինկեվիչ խիրուրգիական հ., Կրասնօգլեադով և Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտեյմբօրսկի և Աստուածատուրով վիներական և կաշու հ., Բաբայեվ ջղային և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Բաբով կուրծքի հ., Եանկովսկի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վզօրով բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրիական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիեվսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Ատամնաբոյժ Օբրեխտ աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

ОТЪ РАСПОРЯДИТЕЛЬНАГО КОМИТЕТА

Тифлисскаго Благотворительнаго ОБЩЕСТВА

Объявляется, что копѣечный сборъ будутъ производить въ текущемъ великомъ посту по городскимъ участкамъ: въ 1-мъ А. Е. Фролова, во 2-мъ княгиня Е. А. Гагарина и А. И. Руманская, въ 3-мъ О. А. Томичъ и Е. Н. Иванова. въ 4-мъ В. Я. Опочинина (участокъ бывшій княгини С. Я. Святополкъ-Мирской), въ 5-мъ княгиня М. Г. Меликова, въ 6 и 8-мъ княгиня В. Г. Баратова, въ 7-мъ С. П. Красноглядова и О. Н. Чукмасова, въ 6-мъ княгиня О. Д. Барятинская, въ 10-мъ Фон-деръ-Нонне.

Дамы, принявшія на себя трудъ копѣечнаго сбора, будутъ ходить въ сопровожденіи околодочныхъ надзирателей.

На кружкахъ имѣются печатныя надписи на русскомъ, грузинскомъ и армянскомъ языкахъ.

(131) 2—2.

Վաճառվում է նոր հրատարակված «Ցիսնաղի Տաւիղ» Ֆրէյդունի գրքոյկը պ. Զ. Գրիգորեանցի և Կենտրօնական գրավաճառանոցներում: Գրքոյկի գինն է 30 կ., գաւառներից ցանկացողները կարող են ուղղակի դիմել Պ. Յովհաննէս Սուզանաճեանցին հետեւեալ հասցէով. Тифлисъ. Ивану Артемьевичу Сузанаджіанъ. на Петхайнской ул. собственый домъ № 13.

Դուրս եկաւ մամուլի տակից և ծախվում է թէ կենտրօնական և թէ Զ. Գրիգորեանի գրավաճառանոցներում և պ. Ծատուրեանի խանութում «ՔԵՐԹՈՒԱԾՔ և ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ, պ. Ն. ԱԴԱՄԵԱՆԻ, հրատարակութիւն Ս. Արծրունեայ: Գիրքը բաղկացած է 243 ԵՐԵՍՆԵՐԻՑ: Գինն է 1 ր. 25 կ.:

3—5

1. Երգնկեանց քահանայ—Մանկական երգարան, երգեր և պար-երգեր ընդունված է Ներսիսեան և Գայանեան դպրոցներում. գինն է . . — ր. 20 կ.
2. Մեծատուն Եանց—Երգարան աղջկանց և աշակերտուհեաց Հայկական ուսումնարանաց . . . . . 1 ր. — կ.
3. Բժիշկ Բ. Նաւասարդեանց: Դիֆտերիտ բողազացաւ . . — ր. 25 կ.
4. Բժիշկ. Գ. Տէր-Գրիգորեանց—Վարակիչ հիւանդութիւններ.

(Ծաղիկ, կարմրուկ, սկարլատին, բծաւոր տիֆ, անդրադարձ տենդ, դիֆտերիտ, ընդհատ տենդ, խօլերայ, դեղին տենդ, որովայնատիֆ և ժանտախտ.)

Սոցա յատկութիւններն, ծագման և տարածման եղանակներն և նախապաշտպանողական միջոցներ.

Վաճառվում են Զ. Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանոցումն:

8—8

Ընանովի քարվանսարան այրվելուց յետ, նորից բացված է խստակ մոմի առևտուր Սիմոնեան փողոցում Արծրունու քարվանսարայումը № 14. իւրաքանչիւր շաբաթ ստացվում է նոր շինուած խստակ մոմեր իմ սեփական գործարանից և որոնք վաճառվում են էժան գներով. խնդրեմ գնողներին չը թողնել իրենց այցելութիւնները:

Յովհաննէս Կուրծեան

4—4

Փետրվարի 12-ից ԲԱՑՎԵՑ իշխան ՍՈՒՄԲԱՏՕՎԻ տանը ԿՕՆԴԻՏԷՐԻ և ՀԱՅԱՐԱՐԻ (пекарня) մագազին «ВАРШАВСКАЯ ПЕКАРНЯ» վերնագրովը, որտեղ կը վաճառվին զանազան տեսակ խմորեղէններ, նոյնպէս կը վաճառվին զանազան տեսակ կօնֆէտներ արժան գնով. թէ փոքր և թէ մեծ քանակութեամբ ցանկացողները կարող են ստանալ ԻՄ ԳՈՐԾԱՐԱՆԻՑ: Օտար քաղաքացիք կարող են դիմել հետեւեալ հասցէով. СОЛОЛАКИ, ВЪ ВАРШАВСКОЙ ПЕКАРНИ Мартиросу Ахназарову. Պատուէրները կը կատարվեն ամենայն ճշդութեամբ, գնողներին մեծ զիջումն անելով և փոստի ծախսը մեզ վրա առնելով. կոնֆէկտների գինը ֆունտը 40 կօպէկից մինչև 1 ր.:

13-դ ԼԷՑՐ-ԳՐԵՆԱԴԵՐԵԱՆ Նորին Մեծութեան ԳՈՒՆԴԸ խնդրում է ցանկացող անձանց ԿԱՊԱԼՈՎ վերցնել այդ գունդին ՄՍԻ և զանազան ՊԱՇԱՐԵՂԷՆՆԵՐԻ հասցնելը, դիմել գունդին ՄԱՆԳԼԻՍ: Աշխատանքը կը սկսվի ներկայ տարվայ ԱՊՐԻԼԻ 1-ին և կը շարունակվի մինչև ապրիլի 15-ը:

4—4 (2)

Տպագրութեան համար պատրաստ են «Դօն Կարլոս» (հետաքննութիւն ձշմարտութեան) Պրէսկօտի, «Աբրահամ Լինկոլն» ստրուկներին ազատող Վիլհելմ Հոֆմանի, և Մոլիէրի «Ամուսնացողներին խրատ» հայ թարգմանութիւնները:

Թարգմանվումեն Մոլիէրի հետ «Ծարտիւֆ կամ կեղծաւոր» և «Կեղծ հիւանդ» կատակերգութիւնները:

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ ՌՈՒՍԱՑ ԲԱԶԱՐԻ և ՀԱՒԼԱԲԱՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԻ վրա կառուցված են ԱՌԵՏՐԱԿԱՆ ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ վարձով տալու համար. ռուսաց բազարի վրա 18 համարներ և Հաւլաբարի հրապարակի վրա 40: Ցիշեալ շինութիւնները ՎԱՐՁՈՎ վերցնել ՑԱՆԿԱՑՈՂՆԵՐԸ հրաւիրվում են քաղաքային վարչութիւնը, որի ԳՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ ամենայն օր, բացի տօն օրերից, առաւօտեան 10 մինչև 2 ժամը երեկոյեան վարձի ՊԱՅՄԱՆՆԵՐԸ կը յայտնվեն:

3—3

Дозволено Цензурою 20 Марта 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսօնի Типографія А. А. Михельсона